

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԷՋՆՐՈՒՄ (նվիրվում է ամսագրի հրատարակության 55-ամյակին)

55 տարի առաջ՝ 1944 թ. հունվարից, սկսեց հրատարակվել «էջմիածին» ամսագիրը* որպես անմիջական շարունակություն 1919 թվականին նախ՝ պատերազմական ծանր վիճակի պատճառով ընդհատված «Արարատ»-ի:

Անցնող քսանհինգ տարիների ընթացքում, սակայն, շատ բան էր փոխվել: 1880—1910-ական թվականներին էջմիածինը, Հակոբ Օշականի բնորոշմամբ, արևելահայ բանասիրության կենտրոնն էր, ուր, իրենց հոգևոր սպասավորությանը զուգընթաց, Հայոց Եկեղեցու և հայ ժողովրդի ու ընդհանրապես վաղ շրջանի ընդհանուր եկեղեցական պատմությանը և մշակույթին նվիրված մեծաթեք ուսումնասիրություններով ու հրատարակումներով հանդես էին գալիս Մայր Աթոռի միաբաններ Գարեգին վրդ. Հովսեփյանը, Կարապետ եպս. Տեղ-Մկրտչյանը, Կոմիտաս վարդապետը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Գևորգյան հոգևոր ճեմարանի, ինչպես նաև էջմիածնի Մատենադարանի շուրջը համախմբված գիտնականներ Մ. Արեղյանը, Ստ. Մալխասյանցը, Հր. Աճառյանը, Հ. Մանանդյանը և ուրիշներ:

Այս ժամանակաշրջանում պետական որևէ կազմավորում և վերջինիս հովանու ներքո գործող գիտական հաստատություններ չունեցող հայ ժողովրդի համար Ս. էջմիածինն էր հայագիտության կենտրոնը, իսկ այնտեղ կատարված աշխատանքները ներկայացնող պարբերականը՝ «Արարատ»-ը: Այս իրողությամբ էր պայմանավորված, Մայր Աթոռի պաշտոնական և կրոնական նյութերին զուգընթաց, թեմատիկ ամենալայն ընդգրկումը՝ հայագիտության տարրեր գիտակարգերին վերաբերող հոդվածներից ու եվրոպական գիտության նորությունների մասին ծանուցումներից մինչև կրթության հարցերի քննարկումներն ու գլուղատնտեսության և բնական գիտությունների մասին հրապարակումները: Այսպիսով, Ամենայն Հայոց Կաթողիկոսության վրա ծանրացած էր ոչ միայն պետականություն չունեցող հայ ժողովրդի ազգային-քաղաքական, այլև կրթական ու գիտամշակութային կյանքի կայմակերպումը և վերջինիս լուսարանումը «Արարատ»-ի էջերում:

1944 թ. իրավիճակը միանգամայն այլ էր և լեցուն ներքին հակասականությամբ ու ողբերգականությամբ, ուր, մի կողմից Խորեն Ա Մուրադբեկյան նահատակ Կաթողիկոսի եղբրական վախճանից ու բարձրաստիճան մի շարք հոգևորականների գնդակահարությունից հետո, զրևթե անշքացած Մայր Աթոռն էր՝ այնտեղ մնացած մի քանի միաբաններով, իսկ մյուս կողմից՝ գիտական աննախընթաց վերլիքի ճանապարհը բռնած Հայաստանի գիտական հաստատությունները:

Այս պայմաններում Ամենայն Հայոց Կաթողիկոսության ազգրեստի տեղակալ Գևորգ արքեպ. Չորեքչյանի (ապագա Գևորգ Զ Կաթողիկոսի) խորազետ քաղաքականության շնորհիվ, խորհրդային իշխանությունների ցուցաբերած որոշակի հանդուրժողության պայմաններում հրատարակվել սկսած «էջմիածին» ամսագրին էր վիճակված շողկապել դարասկզբի բանասիրությունը և խորհրդային շրջանի նոր հայագիտությունը՝ ապահովելով գիտական սերնդափոխությունը, հաջորդայնությունն ու ժառանգորդությունը:

Եթե փորձենք թե՛ կրոնա-եկեղեցական և թե՛ հայագիտական նյութերի տեսանկյունից համապատասխան պարբերացմամբ ներկայացնել «էջմիածին» ամսագրի անցած 55 տարիներին պատմությունը, ապա այն պետք է բաժանել երեք փուլի, որոնք, սակայն, պայմանավորված են ոչ այնքան այս ժամանակահատվածի երեք Հայրապետների և տարբեր տարիների խմբագիրների գործունեությամբ, որքան ժամանակի քաղաքական պայմաններով, որոնք, սակայն, հիմնականում համընկնում են այդ ընթացքում տեղի ունեցած կաթողիկոսական երեք գահակալություններից յուրաքանչյուրին: Առաջին՝ Ստալինյան շրջանը՝ Գևորգ Զ Չորեքչյանի, հաջորդող խորհրդային շրա տասնամյակները Վաղգեն Ա Վեհափառի և երրորդն սկսվում է 1990-ական թթ. առաջին կեսի եկեղեցական կյանքի որոշակի սպասողական վիճակից ու պատերազմական ծանր տարիներից հետո ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությամբ:

«էջմիածին» առաջին՝ 1944—55 թթ. ընդգրկող շրջանը կարելի է համարել ամսագրի հաստատման ու ամրապնդման շրջան, որն ուղիղ համեմատական էր նաև Մայր Աթոռի վերահատ-

* Խմբագրությունը հավատարիմ է մնացել «էջմիածին» հանդեսի որդեգրած ուղղագրությանը:

նումին: Ամսագիրն սկսում է լույս տեսնել 1944 թ. հունվարից՝ որպես «Պաշտոնական ամսագիր Հայրապետական Արևոյ Ս. էջմիածնի», կաթողիկոսական ազգընտիր տեղակալ Գևորգ արքեպիսկոպոսի հրամանով: 52 էջ ունեցող և Հակոբ Կոչոբյանի ճաշակավոր ձևավորմամբ լույս տեսած ամսագիրը բացվում էր Զորեքչյանի «Հայ Եկեղեցու պարտքը իր ժողովրդի հանդեպ» խմբագրականով: Հայրենական Մեծ պատերազմի ուրվագծվող հաղթական ավարտի օրերին ազգընտիր տեղապահը, այս խմբագրականի համար բնական ընտրելով «Հովիտ քաղաքում իր ղևձի վերայ ոչխարաց» (ՅՈՎ. Ժ 11) ավետարանական նշանավոր խոսքերը, գրում է. «Քրիստոսավանդ այս պատգամին հավատարիմ Հայոց Եկեղեցին, որպես արքուն ճովիվ, դարեւ շատունակ պաշտպանել է իր ժողովրդի պայքարն օտար բռնակալների տիրապետության դեմ»:

Այս տարիներին բանասիրական հոդվածներում իսկ մեծ թիվ են կազմում այն նյութերը, որոնք նվիրված են օտար բռնակալների դեմ մարտնչած, ինչպես նաև իրենց հայրենասիրության համար համաժողովրդական սիրո և հարգանքի արժանացած հոգևորականներին:

Ժամանակի թելադրանքով, ինչպես նաև ամսագրի կրոնականեղեցական բնույթով պայմանավորված այս հոդվածներին զուգահեռ, առաջին իսկ համարից սկսյալ, տպագրվում են հայագիտական կարևոր ու մեծարժեք ուսումնասիրություններ թե՛ ավագ և թե՛ նոր սերնդի գիտնականների, ինչպես նաև հոգևորականների կողմից: Այս առումով առանձնանում է հատկապես անդրանիկ համարը, որում տեղ են գտել Ստ. Մալխասյանցի «Նոր են հայերն ընդունել Բրիտանոսությունը», Հր. Աճառյանի «Հայ տառերի գյուտի ստույգ քվականը», Գ. Լևոնյանի «Հովհաննես վարդապետ Մրճուզ», Եղնիկ վարդապետի «Ս. էջմիածնի Մայր Տաճարի ձեռագիր Ավետարանները» և Աշոտ Արրահամյանի «Խաչատուր Երեց Կաֆայեցու տաճերությունը» հոդվածները: Եկեղեցական պատմությանը, հնագրությանը, արվեստագրությանը, ձեռագրագիտությանը և բնագրագիտությանը նվիրված հիշյալ հոդվածներով այս համարն ասես դառնում է մի մանրակերտ, ուր ուրվագծվում են հայագիտության այն ուղղությունները, որոնց պարբերաբար անդրադառնալու էր ամսագիրը:

1944 թ. Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա Կաթողիկոսը գրելով, թե ստացել է «էջմիածին» ամսագրի առաջին համարը, ոգևորությամբ ասում է. «Ամեն կերպ պիտի աշխատենք մասնակից լինել նորա հառաջդիմությանը»:

Այս աչակցությունն արտահայտվում է ոչ միայն Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի պաշտոնական ամսագիր «Հասկ»-ի էջերում Մայր Աթոռի և «էջմիածնին» մասին գրած ջերմ ու դրվատական խոսքերով, այլև անմիջական աշխատակցությամբ ամսագրին: 1945 թ. մայիսի համարում լույս է տեսնում նրա «Նոր տարբեր Մխիթար Այրիվանցու մասին» ուսումնասիրությունը՝ կից բնագրով, որում «Պոռտլանդ և Խաղրակյանց հայոց պատմության մեջ» եռահատոր ուսումնասիրությունում Այրիվանցու մասին իր գրածներին հավելում է նոր նյութեր, իսկ հաջորդ տարվա հոկտեմբերի համարում տպագրվում է «Ենկերորդ դարի ձեռագրական մի ճատակոտոր և Ատոմ Անձևսյաց իշխան» հրատարակումը, որը գիտնական հոգևորականի հայ հնագրությանը նվիրված վերջին տպագիր գործն էր:

Ամսագրի հրատարակությունը մեծ ոգևորությամբ է ընդունվում Սփյուռքում, այդ թվում և սփյուռքահայ գիտնականների շրջանում: Նրանք «էջմիածնին» թղթակցում են առաջին իսկ համարներից: 1940—60-ական թթ. հայ գաղթավայրերի պատմության իր ուսումնասիրությունների շրջանակում մի քանի հոդվածներ է տպագրում սփյուռքահայ ճանաչված պատմաբան Ա. Ալպոյաճյանը (1945 Ը—Թ, 1947 Գ—Գ, Թ—Ժ), հայկական վանքերի ու ձեռագրերի մասին է գրում ԱՄՆ-ից Հ. Քյուրտյանը (1946 Գ—Ե), հայկական հին դրոշներին, դրամագիտությանը, ձևերին ու սովորություններին են նվիրված Ն. Մագսուդյանի (Կիպրոս) հոդվածները (1945 Ա—Բ, Ե, 1946 Բ—Գ):

Միջնադարյան համեմատաբար քիչ հայտնի կամ մոռացված հեղինակներին ու իրանահայ բանահյուսությունները, ինչպես նաև հնդկահայ գաղութի պատմությանն է անդրադառնում հայտնի բանագետ և արվեստաբան Արամ Երեմյանը Իրանից (1948 Ա—Բ, Ժ—ԺԱ, 1952 է, 1953 Գ, է—Ը, 1954 Գ, Թ, ԺԱ):

«Միջնադարյան տաղասացներ» խորագրի ներքո, «Միտն»-ին զուգընթաց, «էջմիածին» ամսագրում Երուսաղեմի միաբան նորայր վրդ. (հետո՝ արքեպիսկոպոս) Պողոսյանն սկսում է տպագրել միջնադարյան տաղերգուներին և ընդհանրապես տարբեր հեղինակներին նվիրված իր նշանավոր շարքը, որն ամբողջանալու և առանձին հրատարակվելու էր «Հայ գրողներ» գրքերով¹:

Հայաստանյան գիտնականներից ավագ սերնդի ներկայացուցիչ Երվ. Շահագիրյան ամսագրի հրատարակության առաջին իսկ տարուց մինչ 1951 թվականը մի շարք բնագրեր ու արխիվային նյութեր է հրատարակում՝ նվիրված անցյալ դարի հայ գրականության ու մշակույթի և

¹ «էջմիածին», 1944, Ա, էջ 3:

² «էջմիածին», 1944, է—Թ, էջ 9:

³ Տե՛ս նորայր եպս. Մավական, Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971:

քնդհանրապես հասարակական մտքի նշանավոր դեմքերին՝ այս հրապարակումներին կից գրված խոսքերում բերելով այսօր արդեն սկզբնաղբյուրի արժեք ունեցող իր հուշերը և կամ՝ ներկայացվող մատվորականի մասին ժամանակակիցների այն վկայությունները, որոնք ինքը լսել և գրառել էր: Այս կերպ են գրված Ռ. Պատկանյանին (1945 ժԱ—ժԲ, 1946 Դ—Ե), Լ. Ալամ-դարյանին (1945 Ե), Մանվել Լպիսկոպոս Կյումուշյանեցուն (1946 Ձ—Է), Ս. Շահադիդին (1947 Է—Ը), Մ. Էմինին (1947 ժԱ—ժԲ), Գ. Գոդոխյանին (1947 Ա—Բ), Պ. Պոռչյանին (1948 Է—Թ), Խ. Արովյանին (1948 Ե—Ձ), Ղ. Աղայանին (1948 Ժ—ժԱ) և այլ դասական գրողների ու գործիչների նվիրված հոդված-հրապարակումները:

1954 թ., Գևորգ Զ Չորեքչյան երջանկահիշատակ Կաթողիկոս վախճանումից հետո, 1955 թ. գումարված ազգային-եկեղեցական ժողովում Ամենայն Հայոց Կաթողիկոս է ընտրվում Վազգեն Առաջինը: Նորին Սրբաթյան ընտրությանը և Ստալինի մահից հետո Խորհրդային Միությունում ստեղծված նոր իրավիճակով սկսվում է «Էջմիածին» ամսագրի պատմության երկրորդ շրջանը, որը, շնորհիվ քաղաքական անհամեմատ բարենպաստ պայմանների, ժամանակի թիլադրանքի և խորհրդահայ հայագիտության զարգացման, էականորեն տարբերվում է ամսագրի հրատարակության առաջին տասնամյակից:

Այս շրջանի «Էջմիածին»-ը, շարունակելով «Արարատ»-ի ավանդները, կանոնավոր կերպով տպագրում է հայ դավանաբանական մտքի պատմությանը, մեկնաբանական գրականությանը, տոմարագիտական հաշվումներին, ծիսագիտությանը և քնդհանրապես եկեղեցագիտությանը ներկրված մի շարք կարևոր հոդվածներ, ինչպես նաև հրապարակում այս հարցերի արծարծող բնագրեր հայ միջնադարյան մատենագրությունից: Փնևվող հարցերի նման շրջանակը «Էջմիածին» հայագիտական բաժինը էականորեն տարբերում է Հայաստանի գիտական մյուս հանդեսների թեմատիկ ընդգրկումից:

1960 թ. Զ համարում լույս է տեսնում Լ. Մ. Մելիքսեթ-Բեկի «Մի փոքր «Գիրք բղքոց»-ի բերի մասերի վերականգնման ուղղությամբ» հոդվածը, որում հեղինակը Վրաստանի Պատմության թանգարանում պահվող 1361 թ. ընթացիկակված մի ձեռագիր ժողովածուի համապատասխան նյութերը համեմատելով «Գիրք Թղքոց»-ի մեզ հասած բնագրի հետ՝ վերականգնում է վերջինի մի շարք հատվածները:

Հաջորդ ուշագրավ աշխատանքը Ծ. Տեր-Մինասյանի «Ն դարի Հայ եկեղեցու պատմության և գրականության մի քանի հանգուցային հարցերի շուրջ» (1962 Ե, Զ) հոդվածն է, որում Մայր Աթոռի նախկին միաբանը և «Արարատ»-ի արդյունաշատ հեղինակն անդրադառնում է հայագիտության մեջ վիճելի և վիճահարույց հետևյալ հարցերին. արդյո՞ք հինգերորդ դարում Քաղկեդոնի ժողովն իր ազդեցությունն է թողել Հայոց եկեղեցու վրա և ի՞նչ շափով. ի՞նչ աղանդներ են եղել հինգերորդ դարում Հայաստանում, և դրանք որն է ազդեցություն թողել են մեր եկեղեցու ու ժամանակի կրոնական գրականության վրա. հինգերորդ դարում մեր եկեղեցին և մասնավորապես ս. Սահակն ու ս. Մաշտոցը դավանաբանական պայքար մղել են նեստորականների դեմ, թե Հայաստան նեստորականների թափանցումն ու նրանց դեմ մղած պայքարը նոր շրջանի հայագիտության կողմից հնարված ու առաջ քաշված տեսություն է: Ինչպիսի՞ն կլիներ հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու հետագա պատմական ընթացքն ու զարգացումը, եթե հայերն ընդունելի Քաղկեդոնի ժողովի որոշումները: Բաղմավաստակ հայագետը մեկ առ մեկ քննում է այս հարցերը:

Բնագրագիտության վրա խարսխված դավանաբանական երկերի աղբյուրագիտական քննությունն են Լ. Անասյանի «Արմատ հաւատոյ»-ին և նրա խմբագրություններին, ժամանակույին ու հեղինակային պատկանելությունը նվիրված հոդվածները, որոնց հեղինակը հանգում է այն եզրակացության, թե այս ժողովածուի խմբագրող-հեղինակը Վարդան Այգեկցին է (1972 Ը, Թ, 1973 ժԲ, 1977 Ը, ժԱ):

Ամսագրում տպագրվել են նաև դավանաբանական բնույթի բնագրեր: Է. Բաղդասարյանի «Հովհաննես Որոտնեցու դավանաբանական գրությունը Կոստանդին Ս Ստեցի Կաթողիկոսին» հրապարակման մեջ ոչ միայն բերվում է Որոտնեցու այս գործը՝ համաձայն Մատենադարանի ձեռագրերի, այլև ներկայացվում են ԺԿ դարի հայ-լատին փոխհարաբերություններով պայմանավորված եկեղեցաքաղաքական այն հանգամանքները, որոնք շարժառիթ են հանդիսացել վերջինիս գրության համար:

Ամսագրի 1973—1974 թթ. համարներում լույս են տեսնում Եղիկ վրդ. Պետրոսյանի (այժմ՝ Եպիսկոպոս) Մովսես Երզնկացու դավանաբանական բնույթի երեք գործերի բնագրերը՝ դարձյալ Մատենադարանում պահվող ձեռագրերի հիման վրա: Բերվող բնագրերին կից ներկայացվում են նաև Մովսես Երզնկացու կյանքը, գործունեությունը և դավանաբանական գրությունները: Հեղինակն անդրադառնում է Երզնկացու մատենագրական ժառանգությանը և կորած դավանաբանական գործերին, «Ընդդիմութիւն աւսի շրայի խառնման...» թղթի (1974 Թ, ժ) զբրության հանգամանքներին: Ասում է, որ այս թղթի գրության շարժառիթը 1297 թ. Ստամբուլում ազգային-եկեղեցական աշ կանոնական ժողովն էր, ուր, չեթում Բ-ի զինական ճնշման տակ, ժողովի մասնակիցներն ընդունել են Հռոմի ներկայացրած ծիսադավանաբանական

պահանջները, որոնցից գլխավորն էր ս. Հաղորդության ժամանակ զինուն ջուր խառնելը: Եզնիկ վարդապետը հաջորդող տարիներին ևս տպագրում է այս բնույթի մի շարք հոդվածներ, որոնց տեսական ընդհանրացումն է դառնում նախ ամսագրում (1993 Ա—Գ), ապա և առանձին գրքով տպագրված «Հայ Եկեղեցու Բրիտանոսաբանությունը»:

Նեստորականության դեմ Հայոց Եկեղեցու մղած պայքարի վիճահարույց հարցերին է ներվիրված Արսեն Լապ. Բերբերյանի «Վ. Պոլսի Պրեկղ Պատրիարքի նամակը հայոց Սահակ Պարթև Կաթողիկոսին» հոդվածը (1975 Կ), որում ցույց է տրվում հինգերորդ դարում Քրիստոնեական Եկեղեցիների և մասնավորապես Կ. Պոլսի Պատրիարքական Աթոռի կողմից Հայոց Եկեղեցուն ընծայված կարևորությունը նեստորականության դեմ մղվող պայքարում:

Առանձին մի խումբ են կազմում ծիսադիտական բնույթի հոդվածները, որոնք հիմնականում գրված են հոգևորականների կողմից: Այս հոդվածներում սովորաբար պատմական տեսանկյունից է քննվում ծիսական որևէ հարցի ձևավորման և զարգացման ընթացքը Եկեղեցու արարողական համակարգում և ցույց են տրվում ավանդական մյուս Եկեղեցիների հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները, և թե դրանք եկեղեցապատմական ինչ հարաբերություններով ու դավանաբանական յուրահատկություններով են պայմանավորված:

Այս մեթոդով են գրված Զարեհ Ժ. վրդ. Պարոնյանի «Նմանություններ և ընդհանուր կետեր արևելյան հին մյուս Եկեղեցիների պատարագների հետ» (1976 Ե) և «Հայոց պատարագի գրծերը՝ համեմատված Բրիտանոսական մյուս պատարագների հետ ընդհանրապես» (1976 Զ) հոդվածները, որոնք մի բաժինն էին Զարեհ վարդապետի՝ «Ումիլներով գրված «Հայ Եկեղեցու պատարագն արևելյան մյուս Եկեղեցիների ծիսական արարողությունների համեմատությամբ» ուսումնասիրության, որը նա որպես դոկտորական թեզ պաշտպանել է աստվածաբանությունից:

Իսկ 1989 թ. ծիսագիտական երկու այլ ուշագրավ հրատարակումներով՝ «Կարգ Իլդաբերից Հայաստանեայց Եկեղեցու» (1989 Բ—Գ) և «Մկրտությունը օծումները Յովհաննէս Օձնեցի Կաթողիկոսի ժամանակ» (1989 Է), հանդես է գալիս Խաթաթ վրդ. Պարսամյանը (այժմ՝ եպիսկոպոս), որոնցից առաջինում անդրադառնում է Հայոց Եկեղեցու Յուդաբերից կարգի ձևավորմանը և եկեղեցական պաշտամունքում տեղ գտնելուն, իսկ երկրորդում Օձնեցու «Կանոններ»-ի և «Ատենաբանության» մեջ մկրտության նվիրված հատվածները համեմատում է մկրտության Կանոնի հնագույն «Մաշտոցների» օրինակների հետ:

Հայոց Եկեղեցու կանանց սարկալագուսի իրավունքի հարցին է նվիրված Արել արեղա Օղյուզյանի «Հայ Եկեղեցու սարկալագուսիները կանոնական տեսանկյունից դիտարկած» (1993 Վ—Գ) ուսումնասիրությունը, որն այնուհետև լույս տեսավ նաև առանձին գրքուկով:

1960-ական թվականներից ամսագրում առավել է կարևորվում ինքնուրույն և թարգմանական բնագրերի հրատարակումը և Հայոց Եկեղեցուն ու մատենագրությանը վերաբերող օտար լեզուներով նորահայտ գրքերի թարգմանությունը: Այսպես, Ազաթանգեղոսի «Պատմության» հունարեն նորահայտ բնագիրն են ներկայացնում Հր. Բարթիկյանը և Ա. Տեր-Ղևոնդյանը (1966 Է—Ը, Բ—Ժ), իսկ արաբական խմբագրությունը՝ Լ. Տեր-Պետրոսյանը (1987 ԺԱ—ԺԲ):

1967 թ. ապրիլյան համարում լույս է տեսնում Հրաչ Բարթիկյանի «Իսահակ կայսեր պատմական նամակը Հայոց Կաթողիկոս Գրիգոր Տղային» ուսումնասիրությունը Բյուզանդական կայսեր թղթի թարգմանությամբ: Բարթիկյանի այս, ինչպես նաև հաջորդ տասնամյակներին գրված «Փիլիպոսիոսի հայկական վաճճի վաճառայր Հովհաննես Արմանի դերը հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններում Ներսես Շնորհալի Կաթողիկոսի օրոք» (1985 Է) և մի շարք այլ հոդվածներ նվիրված են հայ-բյուզանդական հարաբերություններին և գրական առնչություններին, բյուզանդական գրականության տարբեր հուշարձանների հայերեն թարգմանություններին և խմբագրություններին, ինչպես նաև բյուզանդական աղբյուրների հայերեն և Հայաստանի վերաբերող հատվածներին:

Առաջին դարերի Քրիստոնեական Եկեղեցու հայերի գործերի գրաբար թարգմանությունների հրատարակության ժամանակ առաջնահերթ կարևորություն է տրվում նախ այն ստեղծագործություններին, որոնց հունարեն բնագրերը չեն պահպանվել և ապա՝ ընդհանուր բարոյագրական ու հոգևոր դաստիարակչական նշանակություն ունեցող երկերին: Պատահական չէ, որ վերջիններս ներկայացվում են նաև ժամանակակից հայերեն թարգմանությամբ, ինչպես, օրինակ, հինգերորդ դարի հեղինակ Հեսիթոս Երուսաղեմացու Հովհաննես Մկրտչին նվիրված նորահայտ ճառի բնագիրը հրատարակում է Եզնիկ վրդ. Պետրոսյանը Ե. Մելքոնյանի թարգմանությամբ: Եզնիկ վարդապետը, Հայկազուն արեղա Նաչարյանի հետ համատեղ, «Նշխարներ Որոգիների հայկական բարգմանությունից» խորագրի ներքո տպագրում է նաև Որոգիների երկերի գրաբար թարգմանություններից պահպանված մի բանի փոքրիկ հատվածներ (1979 Բ):

Հաջորդ համարում լույս է տեսնում Հակոբ Սրճեցուն վերագրվող Գանիել Գալաացու վարքը՝ Ժէ դարում կատարված թարգմանությամբ, որը հրատարակության էր պատրաստել Լ. Տեր-Պետրոսյանը՝ կարճատև առաջարկներով հատկապես շեշտելով այն հանգամանքը, որ, թեև հա-

մաձայն ընդունված կարծիքի, հայ-ասորական գրական առնչությունները հասնում են մինչև ԺԳ դար, սակայն, շնորհիվ այս թարգմանության, դրանք երկարում են ևս շորս հարյուր տարով։ Գրիգոր Նազիանզացուն ուղղված Բարսեղ Կեսարացու Լերեք թղթերը (1988 ժԱ—ԺԲ) և Նազիանզացու «Յաղագս աղբատասիրութեան» ճառը (1992 Ա—Գ) հրատարակում է Կ. Մուրադյանը՝ մի շարք այլ հոդվածներում անդրադառնալով նաև Կապադովկյան այս հայրերի գործերի գրաբար թարգմանություններին և ընդհանրապես 4—5-րդ դարերի հայ-հունական գրական առնչություններին։

Միջնադարյան մատենագրության մի շարք բնագրեր տպագրվում են նաև եկեղեցական տարբեր իրադարձությունների առիթով, ինչպես, օրինակ, էջմիածնում 1969 և 1976 թվականներին տեղի ունեցած մյուսուսուհիության ժամանակ Հ. Անասյանը հրատարակում է Սրբալույս Մյուսուհին նվիրված «Թովմա Ազուլեցին և նրա մեռնուհները» (1969 թ) և «Մի նորահայտ մեռնուհություն և Թովմաս Ազուլեցու անտիպ տաղերից» (1976 ժ—ԺԱ) հոդվածները։

Երաժշտագիտական հոդվածները և ունեն շեշտված կրոնս-եկեղեցական ուղղվածություն, որոնց գերակշիռ մասը նվիրված է հայ հոգևոր Լրաժշտությանն ու նրա ձայնային համակարգին և եկեղեցական արարողությունների ընթացքում հնչող երաժշտությանը։ Կանոնավոր կերպով տպագրվում են Ն. Թաճիրյանի, Ռ. Աթայանի, Ա. Արևշատյանի, Ա. Բաղդասարյանի և մի շարք այլ երաժշտագետների հոդվածները՝ նվիրված միջնադարյան տարբեր ստեղծագործություններին և հայոց Ս. Պատարագի եղանակավորմանն ու խաղերի վերածնությանը։ Եկեղեցական կյանքի փորձառության մեջ երաժշտագիտության զուգակցմամբ այս բնագավառում ևս արժեքավոր հոդվածներով հանդես են գալիս տարբեր հոգևորականներ, ինչպես, օրինակ, Արսեն Կպս. Բերբեքյանը՝ «Ակնարկ Ս. էջմիածնին հատուկ մի բանի հոգևոր եղանակների մասին» (1973 Գ), և Զավեն Ժ. Վրդ. Արզումանյանը՝ «Արևազալի ժամերգությունը» (1984 Գ), հոդվածներով։

Հոգևոր երաժշտության ու գրականության միջև միջակա դիրք են գրավում համապատասխան եղանակային դաշնավորմամբ հնչած միջնադարյան գրականության տարբեր ժանրերին (շարականներ, գանձեր, տաղեր) նվիրված ուսումնասիրությունները, որոնցից հիշատակելի են հատկապես ամսագրի բազմամյա հեղինակներ Գ. Հակոբյանի ներսես Շնորհալու և ներսես Լամբրոնացու ստեղծագործություններին ու շարականներին և Ա. Քյուշկեբյանի «Տաղարան» ու «Գանձարան» ժողովածուներին նվիրված հոդվածները։

Նույն ուղղվածությունն ունեն նաև գրականագիտական ուսումնասիրությունները, որոնք հիմնականում դարձյալ նվիրված են միջնադարյան գրականության ժանրային համակարգին և հեղինակներին, ինչպես, օրինակ, Ա. Մաղոյանի «Վահրամ վարդապետ Բաբունին և նրա «Ոտանառ Պատմությունը» (1980 ժԱ), Ա. Ղազինյանի «Ներքողը ճայ միջնադարյան գրականության մեջ» (1983 Ե), Ս. Գանիբեյանի «Հոգևոր բանաստեղծության ճանապարհը» (1992 թ—ԺԱ) և մի շարք այլ հոդվածներ։

Հայ-ասորական գրական կապերին և ընդհանրապես պատմամշակութային առնչություններին են նվիրված Հ. Մելրոնյանի «Աստվածաշնչի ասուրերեն և հայերեն թարգմանությունների պատմությունից» (1966 ժԱ—ԺԲ), «Հայ Թովմասի ասուրական վարժը» (1988 Գ) և «Ասորական աղբյուրները Հայ եկեղեցու մասին» (1978 է, ժ—ԺԲ) հոդվածները։

Բնականաբար ամսագրում մեծ տեղ է տրվում և հայ աստվածաբանական ու մեկնողական գրականության պատմության հարցերին։ Մի բնագավառ, որը 1970—80-ական թթ. առավելաբար քննվում է «էջմիածին» ամսագրի էջերում։ Անանիա Վրդ. Արարաչյանի «Եղիշեի աստվածաբանական հայացքները» (1983 Գ), Փ. Անթարյանի «Ժ Խորանաց» երկու մեկնությունների շուրջ» (1987 Բ—Գ), Հ. Քյուսեյանի «Խորհրդանշանը Եղիշեի մեկնաբանական գրականության մեջ» (1989 Ը), Հայր Պողոս Լևոն Զեքիյանի «Եղիշեի երկը որպես վաղ հայկական եկեղեցաբանության վկայություն» (1990 Ա) և մի շարք այլ հոդվածներում ներկայացվում և վերլուծվում են ոչ միայն բուն մեկնաբանական գրականության երկերը, այլև հայ դասական պատմագրության մի շարք հեղինակների գործերում առկա այլաբանական-մեկնողական շերտը, որով «էջմիածին» այս նյութերն ստանձնանում են ժամանակի հայագիտական մամուլում մեր պատմագրության մասին տպագրված մյուս գործերից։

Նաև հաճախ պատմաբանագիտական և ձեռագրագիտական հարցերն իսկ դիտարկված են եկեղեցաբանական տեսանկյունից և կամ հարարելով են եկեղեցական պատմության ու մատենագրության հետ։ Հատկանշական է, որ այդ աշխատանքների հեղինակները հիմնականում հոգևորականներ են, ինչպես, օրինակ, Զավեն Ժ. Վրդ. Արզումանյանը «Քննություն ձեռագրաց Ը դարու ճայ հեղինակ Ղևոնդ Երիցու պատմագրության» (1977 Ա) և «Ույտանես Կպս. Սերապիա և իր «Պատմություն Հայոց» երկը» (1985 ժԱ—ԺԲ), Շնորհք արեղա Բաղդասարյանը «Քրիստոնյաների հայաձայնները Սյունիքում նախադրված շրջանում» (1984 Ա), Արաշամ արեղա (այժմ՝ Եպիսկոպոս) Մկրտչյանը «Սյունյաց միաբանության մասին Արաշամ արեղա Օրբելյանների իշխանության ժամանակ» (1988 է)։ Հայոց և Անգլիկան եկեղեցիների փոխհարաբերությանն են

նվիրված Արսեն եպ. Բերբերյանի «Հայ ազգիկականներ ժ» դարի երկուրդ կեսին» (1973 ը) և «Հայ-Ազգիկական Եկեղեցիների պատմության էքսերից» (1978 Ա) հոդվածները:

«Հլմիածին» ամսագրի երկարամյա խմբագիր Ա. Հատիտյանը 1977—1982 թթ. Հնդհան-րական Եկեղեցու նշանավոր հայրերին նվիրված «Սուրբ Բարսեղ Հայրապետ Կեսարացի» (1979 Գ), «Սուրբ Գրիգոր Մեծը Նիզիպետը Հայրապետ Պետրոսի Նեոկեսարիա քաղաքի» (1981 Ա), «Աֆրիկյան Եկեղեցու Հայրապետ Սուրբ Կիպրիանոս Կարթագենացի» (1982 Բ) և մի շարք համանման այլ հոդվածներում վարձագրական աղբյուրների և գիտական գրականության համարմամբ ներկայացնում է Եկեղեցու այս հայրերի կյանքն ու գործունեությունը, մատենագրական ժառանգությունը և Հայոց Եկեղեցու մատենագրության հետ ունեցած անընթացությունները:

Ամսագրում մեծ թիվ են կազմում նաև հայկական ձեռագրերին նվիրված հոդվածները: 1950 թվականի մայիս-հունիս միացյալ համարից սկսած, ավելի քան չորս տասնամյակ, Մայր Աթոռի ձեռագրատանը պահպանող և ստացված նոր ձեռագրերի նկարագրությունը «Ցուցակ Մայր Աթոռի Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի» խորագրերի ներքո ներկայացրել է Ն. Տեր-Միքայելյանը:

Մաշտոցի անվ. Մատենադարանի գիտաշխատող, Գևորգյան Հոգևոր Ծեմարանի դասախոս Արտ. Մաթևոսյանը 1966 թ. հրատարակած «Լիմ անապատի գրչության կենտրոնը ժԳ—ԺԾ դարերում» (1966 Ջ), «Մի ձեռագիր Ավետարանի հիշատակարանի նոր վերծանություն» (ԺԱ—ԺԲ) և հաջորդող տասնամյակներին մինչ այսօր լույս ընծայած ավելի քան երկու տասնյակ հոդվածներում հետևողականորեն անդրադառնում է թե՛ գրչության կենտրոններին, որոնք միջնադարյան Հայաստանի վարդապետարաններն էին և թե՛ առանձին ձեռագրերի հետ կապված ձեռագրագիտական ամենատարբեր հարցերին: Գրեթե նույն հարցերին է անդրադառնում նաև Կ. Մաթևոսյանը 1981 թ. լույս տեսած «Իշխան Գրիգոր Մամիկոնյան— պատմիչատու և ճավա-նավոր եկեղեցական շինարարության» և «Հայոց կաթողիկոսարանի մատենադարանն ու գրչատունը Անիում» երկու և հաջորդ տարիներին մի շարք այլ հոդվածներում:

Հայկական ձեռագրերի մի շարք հավաքածուների, վերջիններիս ճակատագրի և տվյալ վայրում ունեցած թվահամարների, ապա Մայր Աթոռի, այնուհետև Երևանի Մատենադարանում ստացած նոր թվահամարների համադրական տախտակներին են նվիրված հայկական ձեռագրերի ուսումնասիրման մեծ երախտավոր Օ. Եգանյանի «Ավետիք և Համբարձում էնֆիաճյան գրավաճառ եղբայրների ձեռագրական հավաքածուն» (1968 է), «Գևորգյան Ծեմարանի ճայերեն ձեռագրերի հավաքածուն» (1969 Գ), «Քաղավարդեցի Գրիգոր Լամբան Գաղղյանցի հայերեն ձեռագրերի հավաքածուն» (1969 է—Ը) և հաջորդող տարիներին տպագրված հոդվածները, որոնցում կատարված ճշտումները, համապատասխան ամփոփ շարադրմամբ և տարբեր աղբյուրակներով, տեղ էին գտնելու Երևանի Մաշտոցի անվ. մատենադարանի հրատարակած երկու ձեռագրացուցակներում⁵:

Հայկական ձեռագրերի կազմարվեստն է քննված Հ. Տեր-Ղևոնդյանի «Մատենադարանի արժաթյա ձեռագրակազմերի մասին» (1961 ԺԲ), «Հայկական արժաթյա մասնատուփերի երկու հին նմուշներ» (1962 Գ) և հաջորդող տարիներին լույս տեսած հոդվածներում:

Գրչության արվեստին ու մանրանկարչությանն են նվիրված Ս. Տեր-Ներսիսյանի «Երզրենկայի 1269 թվի Աստվածաշունչը» (1966 ԺԱ—ԺԲ) և Մեսրոպ վրդ. Մաթուռդյանի «Կենդանագրի ծագումն ու զարգացումը հայ մանրանկարչության մեջ» (1972 Ե) և մի շարք այլ ուսումնասիրություններ:

Հայ մանրանկարչության և մասնավորապես Վասպուրականի մանրանկարչության դարձն է ներկայացված Հ. Հակոբյանի «Ավետարանական պատկերագրության առանձնահատկությունները Վասպուրականում» (1971 Գ), «Մանրանկարիչ Կիրակոս Բահանան» (1973 Գ) և մյուս հոդվածներում, որոնք այնուհետև տեղ գտան հեղինակի՝ Վասպուրականի մանրանկարչությանը նվիրված երկհատոր մենագրությունում:

1960-ական թվականների վերջերից հայ հնատիպ գրքի պատմության մատենագիտական ճշտումներին, հայկական տպագրության կենտրոններին, առանձին գրքերի տպագրության հանգամանքներին հետ կապված հարցերին նվիրված մի շարք հոդվածներով հանդես են գալիս հայ տպագրի գրքի պատմության ուսումնասիրության երախտավորներ Ռ. Իշխանյանը և Հ. Դավթբյանը, ինչպես նաև Ն. Ոսկանյանն ու Ք. Կորկոտյանը: Հայկական տպագրությանը նվիրված այս հրատարակություններն այնուհետև ներառվում են «Հայ գրքի մատենագիտության» երկու հատորներում⁶: Հայկական տպագրության զարգացմանը և բուն Հայաստանում հաստատվելուն ու

⁵ Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Բ, Երևան, 1970, 1546 էջ և Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, Երևան, 1984, 1468 էջ:

⁶ Տե՛ս Հայի Դավթբյան, Հայ գրքեր 1801—1850 թվականներին, Երևան, 1967, 540 էջ և Նիկեյ Ոսկանյան, Քնարիկ Կորկոտյան, Անթառամ Սավալյան, Հայ գրքեր 1512—1890 թվականներին, Երևան, 1988, 863 էջ:

տարածվելուն է նվիրված Գեղարդավանքի վանահայր Եղիշե ավ. քնն. Սարգսյանի «Ս. Էջմիածնի դերը ճայ ճնատիպ գրքի տպագրության գործում» (1984 Դ) հոդվածը:

Ամսագիրն անդրադառնում է նաև հայ մամուլի պատմությանը: Կրոնական պարբերականների անցյալն ու արդի վիճակն է քննվում Ա. Գրիգորյանի «Ակնարկ ճայ կրոնական մամուլի պատմության վրա. կրոնական քերթերը Արևելյան Հայաստանում» (1959 Ժ) հոդվածում:

Հրատարակության հարյուրամյակի առիթով ամբողջապես «Արարատ»-ին է նվիրված 1968 թ. ԺԱ—ԺԲ միացյալ, իսկ «Էջմիածնի» տպագրության 30-ամյակին՝ 1975 թ. հունվարյան ու փետրվարյան համարները: Նախ 1970-ական թթ. համարների շնորհիվ, ապա և առանձին զբոսըրով լույս են տեսնում նաև այս երկու ամսագրերի մատենագիտությունները, որոնք կազմել է մատենագետ Սեդա Կոծինյանը:

1960-ական թթ. երկրորդ կեսին լույս են տեսնում Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ս. Անթոնյանի ժամանակակից հայերենին և խորհրդային շրջանում հայ լեզվաբանության զարգացմանը նվիրված հոդվածները:

Սակայն քանի որ «Էջմիածնի» գիտական նյութերն իսկ առնչվում են անցյալի հոգևոր ժառանգության հետ, ամսագրում տպագրված լեզվաբանական հոդվածները ևս նվիրված են լեզվի պատմությանը, գրաբարին և միջնադարյան քերականագիտական աշխատություններին: 1953 թվականի մայիսի համարում լույս է տեսնում Հ. Աճառյանի «Հայերենից փոխառյալ բառերը պարսկերենում» ուսումնասիրությունը, համաձայն որի ոչ միայն հայերենում են մեծ թիվ կազմում իրանական փոխառությունները, այլև մի շարք բառեր հայերենից են անցել պարսկերենին:

1930—40-ական թվականներին պետականորեն ընդունված և իշխող մատական «լեզվական նոր ուսմունքի» համաձայն, որը խարսխված էր լեզուների խաչասերման ու դասակարգային մոտեցման վրա, գրաբարը դիտվում էր ազնվական դասի լեզու, և ըստ այդմ ասվում էր, թե Հայաստանում այդ դասի վերացմամբ այն կորցրել է իր լեզվական կենդանի գործառույթները և դարձել մեռյալ լեզու: 1950-ական թվականների կեսերից, երբ քնական և հումանիտար գիտություններում վերանայվեցին դազափարական պարտադրանքներով թելադրված շատ ըմբռնումներ, նույն այդ շրջանում՝ 1956 թվականի Դ—Ե միացյալ համարում լույս է տեսնում «Էջմիածին» ամսագրի խմբագիր, պրոֆ. Ա. Առաքելյանի «Մի զուգահեռ գրաբարի և աշխարհաբարի միջև» հոդվածը, ուր Առաքելյանը ցույց է տալիս, որ գրաբարը որպես կենդանի լեզու ոչ թե ֆեոդալական դասի և հայ իշխանական տների վերականույն հետ դադարել է գործածական լինելուց, այլ եղել է աշխարհաբարի մայրն ու դասակը, ու թևկուզ վանական միջավայրում, սակայն, կենդանի գործածական նշանակություն է ունեցել մինչև 19-րդ դարի կեսերը:

Հայ գրչության արվեստի կետադրական նշաններն են քննվում Հ. Մխիթարյանի «Հայերենի կետադրությունը» (1957 Ջ) և «Առաջնությունը» (1958 Թ և 1960 Ը) հոդվածներում:

Հայ բառարանագրությանը, Աստվածաշնչի և նրա առանձին գրքերի թարգմանությունն են նվիրված Հ. Ամալյանի «Մակարայեցվոց գրքի հայերեն թարգմանության ժամանակի և հեղինակի մասին» (1980 Ա), Վ. Առաքելյանի «Աստվածաշնչի հայերեն թարգմանության լեզուն և ոճը» (1978 Ա), Գ. Արզարյանի «Սիրաբի գրքի հնագույն թարգմանության նորահայտ հատվածներ» (1966 ԺԱ—ԺԲ) և Լ. Տեր-Պետրոսյանի 1975 թ. Ա համարից սկսյալ շարունակաբար տպագրվող «Սաղմունքների հայերեն թարգմանությունը և նրա նախորինակը» ծավալուն ուսումնասիրությունը:

Նույն կերպ 1971—72 թթ. համարներում շարունակաբար տպագրվում է Հ. Անասյանի «Հայ համաբարբառային զրականությունը և հայ մատենագրության համաբարբառը» ծավալուն ուսումնասիրությունը, ուր հեղինակը նախ ներկայացնում է հայ ինքնուրույն և թարգմանական համաբարբառները՝ սկսյալ Աստվածաշնչի համաբարբառից և այնուհետև անդրադառնում միջնադարյան մատենագրության համաբարբառների կազմության մեթոդային սկզբունքներին:

Գրաբարի հոգևոր-կրոնական բառաշերտն է քննված Գ. Գյուրջինյանի «Իտուարկումներ «Աստված» բաղադրիչով բառակապակցությունների շուրջ» (1995 Ա), «Հայերենի բառակազմունքները «ամուլ» կրոնական բառերը» (1997 Ժ) և մի շարք այլ հոդվածներում:

Ճարտարապետության հարցերին ամսագրում ներկայացվում են հայկական վանքերին ու եկեղեցիներին նվիրված հոդվածներով: Եթե «Էջմիածնի» հրատարակության առաջին տասնամյակում հիմնականում հայոց հոգևոր կենտրոնների, որպես նվիրական սրբավայրերի մասին, գրվում էր ավելի շատ գեղարվեստական շնչով, նրանց պատմության գեղեցիկ և ամփոփ վերաշարադրմամբ, ապա 1950-ական թվականների վերջերից սկսվում է պատմաճարտարապետական համակողմանի քննությունը: Մայր Տաճարի ճարտարապետական հորինվածքին են նվիրված Ա. Սահինյանի «Նոր Ելուրբեր Էջմիածնի Մայր Տաճարի կառուցվածքի վերաբերյալ» (1956 Թ) և «Էջմիածնի Մայր Տաճարի ճարտարապետական կերպարը» (1961 Ա) հոդվածները:

1950-ական թվականների կեսերից տարբեր եկեղեցիների ու վանական համալիրների ճարտարապետական հատկագծերին, լուծումներին, նրանց վիճակն արձանագրությունների քննությունը նվիրված հետազոտություններով հանդես են գալիս Հովհ. Խալիֆախյանը և Հ. Եղիա-

զարյանը: 1970-ական թվականներից առանձնակի տեղ է տրվում Արցախի և Նախիչևանի պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությանը, շափաղմանը, նորահայտ վիճակահան արձանագրությունների հրատարակմանը, Հայոց Եկեղեցու Արցախի թեմի պատմությունը: Տպագրվում են Բ. Ուլուբարյանի, Ե. Մկրտչյանի, Ս. Կարապետյանի, Ռ. Աբգարյանի, Ա. Այվազյանի և մի շարք այլ հեղինակների երկը տասնյակից անցնող հոդվածները:

Գաղթավայրերին և Սփյուռքի հայկական եկեղեցիներին են նվիրված հայ և օտար գիտնականներ Ա. Քորամանյանի «Արդյո՞ք վարդան է Ցաղի հայկական եկեղեցու վերակառուցման հեղինակը» (1972 Գ), Ա. Հախնազարյանի «Ս. Քաղեի վանքը» (1985 Գ), Հ. Ծելայանի «Սփյուռահայ ճեպգույն ուսանելիքները» (Գոմարիի) Հունաստան» (1986 Ծ), Կրողյու Փավլով Կրողկի «Հայ պուլկարական հարաբերությունները քրեական սիրապետության շրջանին» (1975 Դ), Ցոն Սավա Նանուի «Իուլիանոսի հայկական եկեղեցին» (1979 Ա) հոդվածները:

Հայագիտության մի շարք բնագավառների ամենաալյազան հարցեր են քննվում նաև Հայոց Եկեղեցու և մշակույթի նշանավոր դեմքերի ու պատմական նշանակալից իրադարձությունների առիթով հրատարակված «Էջմիածին» ամսագրի 1955—1994 թթ. բացառիկ համարներում, որոնք ունեն որոշակի կալուս կառուցվածք և սկսվում են Ամենայն Հայոց Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի՝ տվյալ հորելյանին և իրադարձությանը նվիրված կոնդակով: Այնուհետև ներկայացվում են տեղի ունեցած եկեղեցական հանգիստությունները, ապա տվյալ հարցի վերաբերյալ բերվում են բնագրային հրատարակումներ ու գրական վկայություններ, հոգևոր արժեքների ու վերաբնասատվորման խոսքեր, որոնց հաջորդում են պատմաբանասիրական հոդվածներ:

Հայոց Մեծ եղեռնին են նվիրված 1964 և 1965 թթ. ապրիլյան համարները, որոնցում թեմատիկ ամենալայն ընդգրկմամբ հոդվածներ են տպագրված Հայոց Մեծ եղեռնի զոհ հայ հոգևորականների, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ձեռագրային աշխարհի կրած կորուստների և մի շարք այլ հարցերի մասին: Ընդհանրապես ամսագրում ձևավորված սովանդութ է՝ յուրաքանչյուր տարվա ապրիլյան համարում գոնե մեկ հոդված տպագրելու ապրիլյան եղեռնի մասին:

1966 թվականի ԺԱ—ԺԲ ծավալուն համարը ամբողջապես նվիրված է Աստվածաշնչի հայերեն տպագրության 300-ամյակին, որում, սակայն, բերված հոդվածները վերաբերում են նաև ընդհանրապես Աստվածաշնչի հայերեն թարգմանության բնագրին, ձեռագիր ընդօրինակություններին և տպագիր հրատարակություններին:

Երևանի հիմնադրման 2750-ամյակի առիթով լույս տեսած բացառիկ համարում (1968 Ժ) բերված են մատենագրական վկայություններ Երևանի մասին, ինչպես նաև Նաղաշ Հովնաթանի «Գովասանություն Երևան Քաղաքին» չափածո ներբողյանը: Մայր Աթոռի տպարանի հիմնման 200-ամյակին նվիրված համարում ներկայացվում են Սիմեոն Կաթողիկոս Երևանցու կյանքն ու գործունեությունը, ինչպես նաև Մայր Աթոռում տպագրված կրոնական, երաժշտագիտական, պատմագրական հրատարակություններին վերաբերող ուսումնասիրություններ: Այդ կապակցությամբ 1972 և 1973 թթ. համարներում տպագրվում են նաև «Հիշատակարաններ Մայր Աթոռի տպարանից հրատարակված հետախույզ գրքերի» և Մայր Աթոռի նահատակ հոգևորականներից 1937 թ. զնդակահարված Արտակ եպս. Սմբատյանի «Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-հիմնական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը» 1910-ական թթ. գրված և մինչ այդ անտիպ մնացած ուսումնասիրությունը:

Հայագիտական մի շարք արժեքավոր հրատարակումներով բացառիկ համարներ են նվիրված նաև Խրիմյան Հայրիկին (1957 Ժ), Կոմիտաս վարդապետին (1969 ԺԲ), Առաքել Գալստիսեցուն (1970 Ծ), Ներսես Աղաթանգեսուն (1970 Ժ), Ներսես Շնորհալուն (1973 ԺԲ), Գյաճորի համալսարանին (1984 ԺԱ—ԴԲ), Մովսես Խորենացուն (1992 Է) և մեր մշակույթի մի շարք այլ նշանավոր գործիչների ու պատմական իրադարձությունների:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի զահակությունը սկսվում է «Էջմիածին» ամսագրի հրատարակության երրորդ շրջանը: 1990-ական թթ. Հայաստանում ստեղծված գրահրատարակչական ծանր պայմաններում Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռում ոչ միայն հովանավորում և իրականացնում է մեր անցյալի դասական հայագիտության ու մերօրյա գիտնականների մի շարք պատմաբանասիրական արժեքավոր ուսումնասիրությունների առանձին գրքերով հրատարակումը, այլև առանձնակի ուշադրություն դարձնում ամսագրի հրատարակությանը: Մեծանում է հայագիտական նյութերին հատկացվող բաժնի ծավալը, ընդլայնվում են թե՛ նյութերի թեմատիկ ընդգրկման շրջանակը և թե՛ աշխատակցող հեղինակների թիվը: Միաժամանակ նոր ուսումնասիրություններով հանդես են գալիս ամսագրի նախորդ տարիների «սովանդակներ» հեղինակները:

Պ. Հակոբյանը ոչ միայն հանդես է գալիս Խաչատուր Աբովյանի կյանքին ու գործունեությանը նվիրված նոր հոդվածներով, այլև քննում Եկեղեցու նվիրապետական համակարգի և Կենդանի կյանքի համար այնքան մեծ կարևորություն ունեցող թեմական բաժանման հարցը «Եպիսկոպոսական արձուներ Գրիգոր Լուսավորչի օրերին» ուսումնասիրության մեջ (1999 Բ, Գ): Երկու հետաքրքիր՝ «Էջմիածնի Ավետարանի ճես աղերսվող պատասխաններ» (1998 Է) և

«Ուշագոսով խորհրդանիշ նախիջևանի 1304 թվականի Ավետարանում» (1999 Ա) հրապարակումներից առաջինում Ա. Գևորգյանը, մի քանի մանրանկարների նորովի քննությունը, լրացուցիչ փաստեր է բերում, համաձայն որոնց էջմիածնի հուշակալոր Ավետարանին կից տնրու-նական շորս մանրանկարները ստեղծվել են հայկական միջավայրում և ոչ թև դրսից բերված մեկ այլ ձևազարդից են, ինչպես անցյալ դարավերջին ենթադրում էին Սարժիզովսկին և մի շարք այլ ուսումնասիրողներ, իսկ երկրորդում ձևազարդին մի լուսանցազարդի միջոցով ցույց է տա-լիս, որ, հին Եգիպտոսի նման, հայկական միջավայրում և ընդունված է եղել երկնային լու-սատունների ընթացքի միջոցով գյուղատնտեսական աշխատանքների սկսման հետ կապված հար-ցերի ժամանակը որոշելն ու ճշտելը:

Դեռևս 1970-ական թվականներից հայ դավանաբանական գրականության ու դավանաբա-նական-մեկնողական բնույթի տարբեր երկերի աղբյուրների քննությունը նվիրված մի շարք հոդ-վածներով հանդես եկող Հ. Քյոսեյանը, 1990-ական թվականներին շարունակելով այս թեման, ամսագրում հրատարակում է նաև հայ մատենագրության վաղ շրջանի, ինչպես նաև Ընդհան-րական Եկեղեցու առաջին դարերի մի քանի հեղինակների երկերի գրաբար թարգմանություն-ների քննադրերը:

1980-ական թթ. վերջերի հոգևոր վերազարթոնքը և գաղափարական սահմանափակումների վերացումը քաղաքական միանգամայն նոր իրավիճակում իր կնիքն է թողնում գիտական հե-տազոտությունների ընդհանուր թեմատիկայի և ուղղվածությունների վրա, որն արտացոլվում է նաև ամսագրում տպագրվող հոդվածներում: Դրանք առավել մեծ շահով են սկսում հարաբերվել եկե-ղեցական պատմության, մատենագրության ու մշակույթի հետ:

Գրականագիտական համանման հոդվածներով հանդես են գալիս Գ. Հակոբյանը՝ «Սուրբ Մենգի և կաղանգի անդրադարձումները արևմտահայ Ետրվելի գեղարվեստական ճամակա-րում» (1995 Ա), Պ. Խաչատրյանը՝ «Մատյան ողբերգության երկի Ետահայտ ճամարբարառը» (1996 Ա), Բ. Խաչատրյանը՝ «Գանձերի ժողովրդական ակունքները և ճորհնման արվեստը» (1996 Գ), Ա. Սարյանը՝ «Հայկական սրբավայրերը ու միջնադարի ուղեգրություններում» (1997 Ը—Թ), Ք. Տեր-Գավթյանը՝ «Թովմայի Ավետարանի հետևեր հայ միջնադարյան գրայցներում» (1998 Գ), Ա. Մաղոյանը՝ «Հայ ուղեգրության առաջնեկը» (1998 Ե):

Հայ եկեղեցու նվիրապետական համակարգի ու կանոնական իրավունքի հարցերն են քնն-վում Ա. Բողոյանի «Պապությունն ու հայերը վաղ և զարգացած միջնադարում» (1996 Թ), «Կաթողիկոս հայոց» տիտղոսի Ետովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո» (1996 Ժ), Վ. Վարդանյանի «Ետեսես Մեծը և Աշտիշատի ժողովի Երանկությունը Հա-յաստանի ներաղափական կյանքում» (1996 ԺԱ—ԺԲ), «Իվինի 554 թվականի եկեղեցածաղվի ճանգամանները» (1999 Բ) և մի շարք այլ հեղինակների աշխատանքներում:

Հր. Միրզոյանը «Ոսկան Երևանցու իմաստասիրական երկի գործնական արժեքն ու կարե-վորությունը» (1998 Գ), «Էնճեղայացում կամ մեկ նկարի պատմություն» (1998 Ե), «Հնդկա-հայ լուսավորության ակունքները» (1998 ԺԱ) հոդվածներից առաջինում անդրադառնում է Ոս-կան Երևանցու «Յաղագս միտքեան և միատուրեան» գործի գրություն հանդիպող, բայց տպա-գիր հրատարակություններից դուրս մնացած բոլորածև մի օձապատկերի, որի գալարների վրա գրված են 13 սուլթանների անունները, իսկ երրորդում ցույց է տրվում, որ հնդկահայ ազգային-հասարակական մտքի վերելքը 18-րդ դարի երկրորդ կեսում պատահական չէր, այլ նախա-պատրաստված էր նախորդ դարի հայ (հատկապես ջուղահայ) մտքի տեսական-գաղափարա-կան նվաճումներով:

Կաթողիկոսական դիվանի հարուստ նյութերի հիման վրա Վ. Գրիգորյանը ներկայացնում է Ղուկաս Կարեցու և 18-րդ դարի երկրորդ կեսին Մար Աթոռի գործունեությունը «Էջմիածնի և շրջակա վայրերի տնտեսական ու մշակութային կյանքի արտացոլումը Ղուկաս Կարեցի Կա-թողիկոսի նամակներում» (1995 Ա), «Ղուկաս Կարեցի Կաթողիկոսի նամակագրությունը Փար-քը Կախեթի թագավոր Հերակ Երկրորդի և վրաց թագավորական բնտանիքի անդամների հետ (1768—1792)» (1998 Ե), «Ղուկաս Կարեցու նամակագրությունը Շահավիր Շահավիրյանի հետ» (1998 Ե) արժեքավոր հրապարակումներում:

Ինչպես նախորդ տասնամյակներին, այս շրջանում ևս ամսագիրն անդրադառնում է եկե-ղեցական նշանակալից իրադարձություններին, գիտական նստաշրջաններին ու տարբեր հորե-լյաններին: 1996 թ. Սրբալույս Մյուտոնի օրհնության և վերջինիս նախօրեին Խորեն Ա Մուրադ-բեկյան նահատակ Կաթողիկոսի աճյունի Մայր Տաճարի բակում ամփոփելու մասին պատմող համարում տպագրված նյութերը նվիրված են Խորեն Ա Կաթողիկոսի կյանքին ու գործունեու-թյանը, Սրբալույս Մյուտոնին վերաբերող մատենագրական վկայություններին, ժողովրդային ընկալմանն ու սրբացմանը, կանոնի ձևավորմանը և պատրաստության համար անհրաժեշտ բույսերը միջազգային ընդունված կարգաբանական համապատասխան դասակարգմամբ ներկա-յացնելուն:

1998 թվականի սեպտեմբերին 1700-ամյակի գիտամշակութային հանդիսությունների շրջա-

Նակում տեղի ունեցավ «Հայաստանը և Փրիստանյա Արևելք» գիտաժողովը, որը բացվեց Գա-
րեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Ամսագրի այդ ամսվա համարում
ոչ միայն տպագրվեց Նորին Սուրբ Օծության խոսքը, այլև հանգամանալից կերպով ներկայաց-
վեց տեղի ունեցած գիտաժողովը՝ ըստ բաժանմունքներում կարգացված գեկուցումների, իսկ
հաջորդող համարներում լույս տեսան գեկուցումներից մի քանիսը:

1999 թվականի հունվարից «Էջմիածին» ամսագրում «Նվիրվում է Հայաստանում Բրիտան-
նեաթյան պետականորեն ընդունման 1700-ամյակին» խորագրի ներքո կանոնավորապես հոդ-
վածներ են տպագրվում Հայոց Դարձի, 301 թ. քրիստոնեությունը պետականորեն ընդունվելու
միավերականության և ընդհանրապես Հայոց Եկեղեցու պատմության առաջին դարի վերաբերյալ:
Մեկ այլ՝ «Հայագիտությունը Եվրոպայում» խորագրի ներքո ներկայացվում են եվրոպական
տարբեր հայագետների ուսումնասիրությունները:

Այսպիսով, մենք աշխատեցինք համառոտ կերպով ներկայացնել հայագիտությունն «Էջ-
միածին» ամսագրի էջերում՝ անդրադարձ կատարելով նաև մի շարք գիտակարգերին առնչվող
հոդվածներին և ուսումնասիրություններին, ինչպիսիք են հայ դավանաբանական և գեղարվես-
տական գրականությունը, լեզվաբանությունը, հոգևոր երաժշտությունը և այլն: Միաժամանակ
հարկ է նշել, որ մեր օրերում, որոշակի դժվարություններով լույս տեսնող հայագիտական կամ
հասարակական մյուս պարբերականների կողքին, անընդմեջ հրատարակվելով, Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածնի պաշտոնական «Էջմիածին» ամսագիրը, պահպանելով նախորդի՝ «Արարատ»-ի լա-
վազույն ավանդները, իր նշանակալից լուման է ներդնում հայագիտության առաջել ծաղկման
ու բարգավաճման գործում՝ ի փառս հայկական գիտության և մշակույթի:

Մ. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ